Հաշվետվություն

2018թ-ի առաջին կիսամյակի ընթացքում ՇՎՏՄ թեժ գծով ստացվող հեռախոսազանգերի վերաբերյալ

2018թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում Տեսչական մարմնի թեժ գծով ստացվել է 115 հեռախոսազանգ, որը գրեթե հավասար է նախորդ տարվա՝ 2017թ-ի առաջին կիսամյակի ցուցանիշին՝ 113 հեռախոսազանգ: Այս տարվա 115 զանգերից միայն 21-ն են վերաբերվել Տեսչական մարմնի լիազորություններին, մասնավորապես՝ 1-ը ստուգաթերթերին, 3-ը գնված ապրանքի որակին (լվացող-մաքրող միջոց, մանկական կոշիկ, օծանելիք), 1-ը ռեեստրին, 1-ը՝ օծանելիքակոսմետիկական ապրանքի ներկրման համար անհրաժեշտ պահանջներին (ըստ տեխկանոնակարգի), 3-ը՝ տեխնիկական կանոնակարգերին, 1-ական՝ խաղալիքներին, կահույքին և բենզալցակայանին, 2-ը՝ գազալցակայաններին, 2-ը՝ ցածրավոլտ սարքավորումներին և 5-ը՝ մակնշմանը:

Նախորդ տարվա համեմատ ցուցանիշը նվազել է 5-ով՝ 2017թ-ի առաջին կիսամյակում տեսչական մարմնի լիազորություններին վերաբերվել է 26 հեռախոսազանգ, մասնավորապես դրանք վերաբերվել են մակնշմանը, համապատասխանության գնահատման ընթացակարգերին: Ինչպես երևում է վերոնշյալից, այս տարի՝ 2018թ-ին, զանգերի բովանդակության մեջ ավելացել են ռեեստրին վերաբերող հարցեր, ստուգաթերթերին վերաբերող հարցեր, ինչպես նաև կոնկրետ ոլորտներին առնչվող հարցեր՝ տեխնիկական կանոնակարգերից:

Այս տարվա 94 հեռախոսազանգերը եղել են ոլորտից դուրս, մասնավորապես՝ 61 զանգ վերաբերվել է գնված ապրանքների հետ վերադարձմանը կամ փոխարինմանը՝ հեռուստացույց, հեռախոս, նոթբուք, հագուստ, կոշիկ, կենցաղային սարքավորումներ, խոտհնձիչ սարք, ներքնակ, պայուսակ, կոնյակ, կոսմետիկա:

Մնացած 33 զանգերից 1-ական զանգ վերաբերվել է ՀԴՄ չտրամադրելուն, դիմումին ժամանակին չպատասխանելուն, ներքնազգեստին, ապրանքի շտրիխ կոդին, ալիքների հեռարձակմանը, բարձր երաժշտությանը, աշխատանքից ապօրինի ազատմանը, պահածոյին, երաշխիքին, ապրանքը նախքան գնելը, վնասելու պատճառով գնել պարտադրելուն, սննդի ներկրմանը, թեյավճար վերցնելուն, ջրաչափին, հեղուկ գազին, հեղուկ գազի լիցքավորման կայան բացելուն, սխալ ապրանք տրամադրելուն, իսկ 2-ական զանգ՝ ապրանքի

վերանորոգմանը և ՎԵՈԼԻԱ ընկերությանը: Ոլորտից դուրս զանգերի հեղինակների անհանգստությունը եղել է սպառողների իրավունքների պաշտպանությունը:

Աճման միտում է դրսևորել տեսչական մարմնի լիազորությունների շրջանակներից դուրս հեռախոսազանգերը նախորդ տարվա առաջին կիսամյակում դրանք կազմել են 80 (այս տարի ավելացել են 14-ով): Ինչպես նախորդ տարի, այս տարի ևս, նշված հեռախոսազանգերի գերակշռող մասը կազմել են գնված ապրանքի հետ վերադարձմանը: Այս տարի տեսչական մարմնի լիազորությունների շրջանակներից դուրս հեռախոսազանգերը եղել են տարբեր բնագավառներից, միչդեռ նախորդ տարի միայն 19 հեռախոսազագ վերաբերվել է բջջային կապի սակագների գներին և ապրանքների գներին:

Ընդհանուր առմամբ ինչպես նախորդ տարի, այս տարի ևս, տեսչական մարմնի շրջանակներից դուրս հեռախոսազանգերին տրվել են պարզաբանումներ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին», «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2002թ-ի հունվարի 30-ի թիվ 77 որոշման վերաբերյալ:

2018թ-ի առաջին կիսամյակում Տեսչական մարմինը ստացել է 11 գրավոր դիմում-բողոքներ, որոնցից 2-ը վերաբերվել են ԱԳԼՃԿ-ներին, իսկ մնացած 9-ը ապրանքների հետ վերադարձմանը: ԱԳԼՃԿ-ների վերաբերյալ ստացված գրավոր դիմում-բողոքների դիմումատուներին սահմանված կարգով տրվել է պատասխան, դիմումում բարձրացված հարցերը ընդունվել են ի գիտություն՝ տեսչական մարմնի հետագա գործողությունների ծրագրում ներառելու նպատակով:

Տեսչական մարմնում ստացված մյուս գրավոր դիմում բողոքները չեն վերաբերվել տեսչական մարմնի լիազորություններին, այդ մասին սահմանված կարգով տեղեկացվել է դիմումատուներին: Դիմում բողոքներից մեկի հիման վրա տեսչական մարմինը իրականացրել է ստուգում՝ «Սերյոժա Աբովյան Անդրանիկի» ԱՁ-ում, որի արդյունքում տնտեսվարող սուբյեկտի մոտ հայտնաբերված խախտումները վերացվել են:

Դիմում-բողքների ցուցանիշը ավելացել է 6-ով՝ նախորդ տարվա առաջին կիսամյակում տեսչական մարմինը ստացել է 5 գրավոր դիմում-բողոք: Ի տարբերություն այս տարվա առաջին կիսամյակի, նախորդ տարվա առաջին կիսամյակում տեսչական մարմինը գրավոր դիմում-բողոքների հիման վրա ստուգումներ չի իրականացրել: Նախորդ տարի, ևս, բողոքների մեծ մասը եղել են տեսչական մարմնի լիազորություններից դուրս, սակայն նրանց սահմանված կարգով տրվել են պարզաբանումներ:

2018թ-ի մարտի 30-ին տեսչական մարմինը հանդիպել է ցածրավոլտ և տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիության սարքավորումների ներկրմամբ և իրացմամբ զբաղվող տնտեսվարողների հետ: Նրանց ներկայացվել է ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը, տեխնիկական կանոնակարգերի պահանջները և իրենց պարտավորությունների շրջանակը:

2018թ-ի ապրիլի 18-ին տեսչական մարմինը իրազեկում հանդիպում է ունեցել Վանաձորի տնտեսվարողների հետ: Նրանց ներկայացվել են իրենց գործունեության ոլորտում իրավական կարգավորումները, մասնավորապես՝ թե ինչ պահանջների պետք է բավարարեն ապրանքները՝ մինչ շուկայահանումը ըստ ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջների: Ներկայացվել են նաև չափագիտական ստուգումների պահանջները, որոնք առնչվում են բուժհիմնարկներում շահագործվող չափման միջոցներին:

ՏՄ-ը 2018թ-ի հունիսի 1-ին ՀԱՊՀ ուսանողների հետ իրականացրել է իրազեկում հանդիպում, որի ընթացքում ներկայացվել են ՇՎՏՄ գործունեության ոլորտը, ոչ պարենային արտադրանքի շուկայում իրականացվող վերահսկողական աշխատանքները:

2018թ-ի հունիսի 28-ին տեղի է ունեցել իրազեկում հանդիպում Գեղարքունիքի մարզում: Մարզկենտրոն Գավառում կազմակերպված հանդիպմանը մասնակցում էին մարզի առողջապահական հաստատությունների ներկայացուցիչները, թանկարժեք մետաղների առք ու վաճառքով զբաղվողները, ԱԳԼՃԿ-ների և բենզալցակայանների պատասխանատուները: Քննարկվել են չափագիտական կանոններին և նորմերին, թանկարժեք մետաղների հարգորոշմանը և հարգադրոշմանը վերաբերվող հարցերը, բենզինի և գազի տեխնիկական կանոնակարգերը:

2018թ-ի առաջին կիսամյակում տարբեր ԶԼՄ-ների կողմից եղել են Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ լուսաբանումներ: Հիմնական թեմաները եղել են ԱԳԼՃԿ-ները և խաղալիքները: Եղել են նաև Տեսչական մարմնի ղեկավար կազմի (ղեկավարի և տեղակալների) մամուլի ասուլիսների հրապարակումներ և լուսաբանումներ, որոնց ամփոփ նկարագիրը ներկայացվում է **Աղյուսակ 1-ում**:

Աղյուսակ 1

ԶԼՄ-ների հրապարակումները և լուսաբանումները Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ

Պաշտոնական հանդիպումներ	1. https://www.aysor.am/am/news/2018/04/06/%D4%B1%D5%B6%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF-%D5%AD%D5%A1%D5%B2%D5%A1%D5%AC%D5%AB%D6%84%D5%B6%D5%A5%D6%80/1395696 2. http://www.tert.am/am/news/2018/04/06/Consumers/2656061 3. https://www.aysor.am/am/news/2018/04/06/%D4%BC%D6%87%D5%B8%D5%B6-%D4%BD%D5%A1%D5%AC%D5%AB%D5%AF%D5%B5%D5%A1%D5%B6/1395728
Խաղալիքների վերաբերյալ	1. https://armenpress.am/arm/news/924196/khaxaliqneri-anvtangutyuny-shukayi-verahskoxutyan-teschakan.html 2. https://168.am/2018/02/27/914117.html 3. http://www.a1plus.am/1598235.html 4. http://www.1in.am/2306190.html 5. https://www.newsinfo.am/arm/article/view/NyfnUVCD4 6. http://analitik.am/news/view/389745 7. http://armday.am/post/44128/44128 8. http://yerevan.today/all/tntesutyun/16434/khaghaliq-nermutsats-76-tntesavaroghneric-hamapataskhanutyan-sertifikat-e-stacel-yndameny-14-y 9. https://press.am/news/227562.html 10. http://araratnews.am/xaghalikh-nermutcoghneri-miayn-184-tokosn-e-stacel-hamapatasxanuthyan-sertifikat/ 11. http://www.lrahos.com/2018/02/27/87554/ 12. http://www.magnis.news/arm/news/129215/ 13. https://www.panorama.am/am/news/2018/03/05/%D5%AD%D5%A1%D5%B2%D5%A1%D5%AC%D5%AB%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B7%D5%B8%D6%82%D5%AF%D5%A1/1915029 14. http://www.tert.am/am/news/2018/02/27/toys/2625147 15. https://news.am/arm/news/443201.html 16. https://news.am/arm/news/439537.html 17. http://www.a1plus.am/1602822.html
ԱԳԼՃԿ-ի վերաբերյալ	1. http://hetq.am/arm/news/85695/shukayi-verahskoxutyan-teschakan-marminy-khakhtumner-e-ardzanagrel.html 2. http://iravaban.net/185693.html 3. https://www.panorama.am/am/news/2018/04/04/ 4. http://yerkirmedia.am/economy/shukayi-verahskoxutyun-xaxtumner/ 5. http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20180328_3&flag=am 6. https://factor.am/43021.html 7. https://www.hraparak.am/posts/ 8. https://armenpress.am/arm/news/927747.html 9. http://past.am/?p=191743&l=am 10. http://tesaket.info/am/n/n1522181448

	11. https://168.am/2018/03/27/927261.html 12. http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20180328_3&flag=am 13. https://www.newsinfo.am/arm/article/view/4Jgq0zrLdN 14. http://www.magnis.news/arm/news/134258/ 15. http://www.magnis.news/arm/news/134258/ 16. http://www.ra.am/archives/18682 17. https://www.aravot.am/2018/03/27/945379/
Ասուլիսներ՝ Լևոն Խալիկյան Արման Ավետիսյան Արթուր Մկրտչյան	1. http://www.aravot.am/2018/03/27/945379/ 2. http://yerevan.today/all/tntesutyun/16793/aysuhet-avtomeqenaneri-bolor-balonnery-che-or-klicqavorven 3. http://mamul.am/am/video/26691970/ 4. http://comment.am/hy/post/183866 5. https://armenpress.am/arm/multimedia/videos/357/ 6. http://hayastan24.com/hy/hasarakutyun/avetisyan-38-gazalcakayanum-xndirner-en-haytnabervel 7. https://www.panorama.am/am/news/2018/03/17/%D5%A3%D5%A1%D5%A6%D5%A1%D5%AC%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B3%D5%B6%D5%B7%D5%B8%D6%82%D5%B4/1920923 8. http://www.shantnews.am/news/view/13489.html 9. http://www.aravot.am/2018/03/17/943279/ 10. https://168.am/2018/03/17/922595.html 11. http://asekose.am/hy_AM/news/8/262802-cavali-iravijak-hayastanoumgazabalonnerov-kahavorvac-avtomeqenanere-sarounakoum-en-hrdehvel.html 12. http://haydzayn.am/p/60525 13. http://www.tert.am/am/news/2018/03/23/mkrtchyan/2645753 14. http://armenia.shafaqna.com/AM/AM/672493 15. http://www.newspress.am/?p=80700&l=am%2F59+nermucoxic+miayn+4-n+e+ancel+sertifikacum+inchpes+gnel+anvtang+xaxaliqner